ՀԱԾՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

VII Ա դասարանի նախագծային ուսուցում

Ուսուցչուհի՝ Նարե Հովհաննիսյան

Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի VII Ա դասարանի աշակերտների հետ՝

1. Ավագյան Մանե
2. Սուքիասյան Էլիզա
3. Դավթյան Սոնա
4. Եղիազարյան Մարի
5. Հովհաննիսյան Արտյոմ
6. Հակոբյան Էլեն
7. Մանուկյան Մանուկ
8. Մարգարյան Անի
9. Խաչատրյան Մարիանա

Հունվարի 15-ից մինչև փետրվարի 19-ը ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ նախագծային ուսուցում «Սնկեր »

թեմայով: Մեր նպատակն էր ծանոթանալ սնկերի թագավորությանը, կարողանալ աճեցնել կախասունկ:
Ուսումնասիրել սնկերի աճման պայմանները: Զարգացնել բազմացման հետազոտության հմտություններ:
Նախագիծն իրականացնելու համար նախատեսված էր 6 շաբաթ:Աշխատանքը սկսելու համար նախ անհրաժեշտ էր ծանոթանալ սնկերի թագավորությանը:Սովորողները տեղեկություններ հավաքեցին սնկերի թագավորության տարբեր տեսակների մասին:Դիտեցին կարճ տեսանյութեր թեմայի վերաբերյալ:Ուսումնասիրեցին սունկ աճեցնելու պայմանները:Այնուհետև ձեռք բերեցինք սնկի միցելներ և սկսեցինք պատրաստած պարկերի մեջ տեղադրել միցելները և սպասել աճին:

Ակտիվ հետազոտական և պրպտողական գործունեության ընթացքում սովորողները հավաքեցին մեծ քանակությամբ տեսական տեղեկություններ սնկերի թագավորության վերաբերյալ:

Տեղեկություններ հավաքեցին թե ինչպիսի պայմաններ ստեղծեն, որ կախասնկի աճը ավելի արագ լինի, ինչպես բերքատվությունը բարձրացնեն:

Պատրաստել էին 4 ծղոտե պարկեր:Տարբեր աճման պայմաններ էին ստեղծել:Եվ ի վերջո, մեկ շաբաթ հետո պարկերից մեկի մոտ նկատվեց փոփոխություն, և ի հայտ եկան առաջին փոքրիկ սնկերը:Մշտապես հետևելով աճին՝ չափումների միջոցով, և անզեն աչքով տեսանելի էր սնկի արագ աճը: 2-3 անգամ բերքահավաք կատարելուց հետո դադարեցերցինք աշխատանքները: Կարևորը կարողացանք ստանալ կախասունկ,որը մեր նախագծի նպատակն էր:

Նախագծային աշխատանքը ներկայացրեցին աշակերտները սահիկաշարի միջոցով :

Ծնորհակալություն